ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԽՐԱՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ՝

Գայանե Սիմոնյան

Հովհաննես Սարկավագը միջնադարյան Հայ Առաքելական Եկեղեցու կարկառուն ներկայացուցիչ և հանրագիտակ հեղինակներից է, ում ողջ ստեղծագործական ժառանգությունը միտված է Հայ Առաքելական Եկեղեցու (իբրև հավատ, հայրենիք, մշակույթ, կրթություն և գիտություն) դերի ու նշանակության պանծացմանը՝ դառնալով ժամանակի տարաբնույթ մարտահրավերների հաղթահարման կարևորագույն կռվան ու առհավատչյա:

Հովհաննես Սարկավագի երկերում դրսևորված ենք գտնում մի դեպքում՝ Հայ Առաքելական Եկեղեցու՝ քրիստոնեական աստվածաբանության ու վարդապետության հնամենի ավանդների հանդեպ ունեցած խիստ պահպանողական ու հավատարիմ վերաբերմունքը, մյուս դեպքում՝ նոր ժամանակներին համահունչ դրանց նորովի կիրարկումն ու զարգացումը, այլ դեպքերում՝ դեպի ապագա ուղղվածությունը:

Սկզբնաղբյուրների տեղեկություններից պարզ է դառնում, որ Սարկավագը գրել է, կատարելապես մեկնելով, վերլուծելով վարդապետությունը, մարգարեությունները ու առաքելական թղթերը, ժամանակի ընթացքում աղճատված բնագրերը վերականգնել[2], որոնցից շատերը մեզ չեն հասել կամ բացահայտված չեն:

Հովհաննես Սարկավագի աստվածաբանական երկերից[3] երկուսը՝ «Վասն պատկերաց»-ն ու «Վասն մասանց պատոյ»-ն առաջինը հրատարակել է Արտ. Սեդրակյանը[4]:

Տեսական աստվածաբանական երկերից՝ «Վասն պատկերաց»-ին ու «Վասն մասանց պատոյ»-ին անդրադարձել է Հ. Քյոսեյանը[1]: «Վասն պատկե-

---

[1] Սույն հոդվածը հրատարակվում է 13-6D381 ծածկագրով՝ «Դրվագներ հայ աստվածաբանական մտքի պատմությունից» թեմայի շրջանակում:

[2] «Հանդէս բանի վասն երանեալ առնն աստուծոյ Սարկաւագին կենաց եւ մահուն եւ այլոց սրբոց հուպ յայն ժամանակս», տե՛ս **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 120:

[3] Հովհաննես Սարկավագի աստվածաբանական երկի շարքին կարելի է դասել նաև նրա աղոթքները, սակայն այստեղ դրանց չենք անդրադառնա, քանզի դրանք այլ քննության նյութ են:

[4] **Ա. Սեդրակեան**, Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ պատկերագրութիւնը. Ս. Պետերբուրգ, 1908:

կերաց»-ը դավանաբանական նկատառումներով[2] գրված ստեղծագործություն է, որտեղ դրսևորված է Հայ Առաքելական Եկեղեցու չափավոր վերաբերմունքը պատկերների նկատմամբ, և այն նպատակաուղղված է այդ վերաբերմունքի ժողովրդականացմանը: Պատկերահարգությունն է այն դիրքորոշումը, որ ունի մեր եկեղեցին, որի հիմնավորմանն ու տարածմանն է միտված Սարկավագի այս ստեղծագործությունը:

Հովհաննես Սարկավագի երկերի առաջին լրջմիտ ուսումասիրողներից մեկն ու հրատարակիչը՝ Ա. Աբրահամյանը[3], թեև չհասցրեց հրատարակել նրա աստվածաբանական երկերն ամբողջությամբ՝ առանձին գրքով, սակայն Սարկավագի մատենագրության մեջ տեղ են գտել նաև այդպիսի երկեր՝ «Նորին [Յովհաննու քահանայի] հակաբանութիւն հնագիտական ընդդէմ անգիտաց ոմանց յիրս գիտութեան, որ ստայօդ ճառիւք հաւանեցուցին զոմանս ի վայրագաց և պարզամտաց հաւատալ անհաւաստի իւրենց կարծեաց»[4], «Պատմութիւն սրբոյ Զատկին»[5], «Նորին Յովհաննու առ որս պիղծ զմիս վարկանեն եւ զանձինս ոչ արգելուն»[6] ևն:

Ա. Աբրահամյանը Հովհաննեսի կրոնա-պոլեմիկ աշխատությունների շարքին է դասել «Նորին [Յովհաննու քահանայի] հակաբանութիւն հնագիտական ընդդէմ անգիտաց ոմանց յիրս գիտութեան, որ ստայօդ ճառիւք հաւանեցուցին զոմանս ի վայրագաց և պարզամտաց հաւատալ անհաւաստի իւրենց կարծեաց» աշխատությունը՝ ՀՊՁՄ, թիվ 2751, է. 200բ-207ա[7], որտեղ խոսվում է վաղ քրիստոնեական աղանդների ու դրանց առաջացման ժամանակների, պատճառների մասին:

Վերոնշյալ երկը «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն»-ի գլուխներից մեկն է:

Սարկավագը այս գլխում վերլուծել ու «կործանել է» «Քաղկեդոնի ժողովի հայհոյությունը», Նեստորին ու Լևոնի տումարը, ապա «խայտառակել ոմանց տգիտությունն ու առասպելական կարծիքները՝ նրանց կանգնեցնելով հաւաստի ուսմունքի ու գրությունների հանդիման»[8]:

---

1 **Հ. Քյոսեյան**, Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995:

2 **Նույն տեղում**, էջ 145:

3 **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956:

4 Նույն տեղում, էջ 140-147:

5 Նույն տեղում, էջ 269-276:

6 Նույն տեղում, էջ 330-349:

7 **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 37: Ա. Աբրահամյանը հրատարակել է այս երկի միայն ԺԳ գլուխը: Տե՛ս նույնի նշվ. աշխ., էջ 140-147:

8 Նույն տեղում, էջ 140:

Այն գրել է՝ օգտվելով Եվսեբիոսի «Եկեղեցական պատմությունից»։ Այս բնագիրը Ա. Աբրահամյանը համարում է նաև Հայաստանում սոցիալական շարժումների համար կարևոր սկզբնաղբյուր, քանզի խոսք կա պավլիկյանների մասին[1]։

«Յովհաննու Սարկաւագ վարդապետի յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին» - ը հրատարակվել է «Սոփերք հայկականք»-ի Գ հատորում[2]։

Երկարատև ընդմիջումից հետո՝ 1996 թվականին «Գանձասար» աստվածաբանական հանդեսի Զ հատորում լույս է տեսել Սարկավագի «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն»[3]՝ *ժողովածուի մի հատվածը։ Այդ հանդեսում ներկայացված են այդ երկի Ե, Զ, Է, Ը և ԺԱ գլուխները*[4]։

Մեսրոպ քահանա Արամյանը «խիստ ուրվագծային» ուսումնասիրությամբ ներկայացնում է «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն»-ը։

«Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն» երկում Հովհաննեսն առանձնակի ուշադրության է արժանացրել Սուրբ Երրորդության, Հիսուս Քրիստոսի բնության (աստվածային ու մարդկային) կարևորագույն խնդիրները, որոնք պատճառ դարձան ոչ միայն քրիստոնեական ընդհանրական եկեղեցու պառակտմանը, այլև բազմաթիվ հերձվածների[5] *առաջացմանը՝ հաստատակամորեն ամրագրելով Հայ Առաքելական Եկեղեցու դավանանքը։ Նա, մերժելով ժամանակի հանրահայտ հերետիկոսությունները՝ սաբելականությունը, արիոսականությունն ու նեստորականությունը, գրում է. «....Մի գոլ բնութեան զԵրիս Առանձնաւորութիւնս»*[6] *կամ «Իսկ Հայրն եւ զՈրդի եւ զՍուրբ Հոգին շրթմամբ*

---

1 Նույն տեղում, էջ 39։

2 Յովհաննու Սարկաւագ վարդապետի յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին, Սոփերք հայկականք, հ. Գ, Վենետիկ, 1853, էջ 9-79։

3 Հովհաննեսն իր երկերում օգտվում է նաև անցյալի հեղինակների թողած ժառանգությունից։ Ինչպես կարծում է Գ. Հովսեփյանը, նրա աղբյուրներից մեկը 8-րդ դարի հեղինակ Խոսրովիկ թարգմանիչն է. «Հովհաննէս քահանայի երկի ԺԶ. Գլուխը - Նորին յայտարարութիւն զանազան հերձոածոց յայլ եւ յայլ ժամանակս յարանց բղջախոհաց – վերնագրով ամբողջապէս համառօտութիւն կամ բանաքաղութիւն է Խոսրովկի Ա. Դ. և Ե. գլուխներից։ ..... միայն անցողակի կերպով խոսում է բնութեան խնդրի մասին» (**Գարեգին վ. Յովսէփեան,** Խոսրովիկ թարգմանիչ (Ը դար), Վաղարշապատ, 1899, էջ 37)։

4 **Մեսրոպ քին. Արամեան**, Յովհաննէս Սարկաւագի «Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն» ժողովուն, «Գանձասար» աստվածաբանական հանդես, Զ, Եր., 1996, էջ 44-78, էջ 278-298։

5 Սաբելականություն (մեկ անձ՝ երեք անվամբ), Արիոսականություն (երեք անձ՝ ըստ բնության), Նեստորականություն (մերժում են Հիսուսի կատարյալ մարդեղությունը) ևն։

6 Յաղագս նշանակի հաւատոյ Նիկիականն ՅԺԸ-իցն, «Գանձասար» աստվածաբանական հանդես, հ. Զ, Երևան, 1996, էջ 278։

խոստովանելով եւ սրտիւ հաւատալովն՝ առանձին գոլ հաւատամք իւրաքանչիւր Ումեք, զի յայսոսիկ հաւասարութիւն տալ Երիցն ոչ ընդունի Եկեղեցի, այլ մի Հայր՝ պատճառ Որդոյ եւ Հոգւոյն սրբոյ, եւ մի Որդի ծնունդ էութեան նորա, եւ մի Հոգի Սուրբ՝ ելող ի Հաւրէ»[1]:

Հովհաննես Սարկավագին աստվածաբանական երկերից է նաև «Լուծումն բանիցն Աստուածաբանի. Սարկաւագին (ձեռ. թիվ 5596, էջ 98բ-211բ)»[2]*-ը, որը Գրիգոր Աստվածաբանի «Ճառ ի սուրբ ծնունդն Քրիստոսի» մեկնությունն է:*

Գրիգոր Աստվածաբանի ճառը առանձնակի նշանակություն է ունեցել Հայ Եկեղեցու քրիստոսաբանության վաղեմությունը և ճշմարտացիությունը փաստելու և ջատագովելու համար[3]:

Հովհաննես Սարկավագն իր աստվածաբանական երկերում անդրադարձել է աստվածաբանության թե՛ տեսական, թե՛ կիրառական խնդիրներին. վերջիններիս քննությունը կատարել ենք մեր նախորդ հոդվածներում[4]:

Կիրառական աստվածաբանության հարցերը ամփոփված են Հովհաննես Սարկավագի՝ 1094 թվականին ստեղծած «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուի, ինչպես նույնանուն, այնպես էլ՝ «Պատմութիւն սրբոյ Զատկին» և այլ գլուխներում:

«Գանձասար»-ում Տրդատ քահանա Ուզունյանի նախաբանով հրատարակվել են հետևյալ բարոյախրատական երկերը[5]*՝ 1. «Հարցում վասն գայթակղութեան», որը Մարկոսի Ավետարանի Թ : 41-42-ի, Մատթեոսի ԺԸ : 7 և Ե : 29-30-ի մեկնությունն է:*

---

1 Նույն տեղում, 1996, էջ 279:

2 Տե՛ս Լուծումն բանից Աստուածաբանի Սարկաւագին, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք Ը, 2013, էջ 66-58:

3 **Ա. Օհանջանյան**, Հովհաննես Սարկավագի «Լուծումն բանիցն աստվածաբանի» լուծմունք-մեկնությունը, Աստվ. ֆակ., Տարեգիրք Ը, էջ 66:

4 **Սիմոնյան Գ., Վարդանյան Ռ.**, Հովհաննես Սարկավագի «Մեկնութիւն տումարիս Հայկազնեայ» տոմարական ժողովածուն, ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ. Ա, Եր. 2006, ԵՊՀ հրատ. էջ 58-97: **Սիմոնյան Գ.,** Հովհաննես Սարկավագի ՇԼԲ (532)-ամյա Զատկացուցակները, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ Զ, Եր., 2011, ԵՊՀ հրատ., էջ 48-85: **Սիմոնյան Գ.,** Հովհաննես Սարկավագի «Ազգաց կանոնները», Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ. Է, Եր., 2012, ԵՊՀ հրատ.,էջ 49-57: **Սիմոնյան Գ.,** Հովհաննես Սարկավագի անշարժ տոմարի ուսումնասիրությունների պատմությունից, Աստվածաբանության ֆակուլտետ, Տարեգիրք, հ. Է, Եր., 2012, ԵՊՀ հրատ., էջ 217-235:

5 **Տրդատ քհն. Ուզունեան**, Յովհաննէս Սարկաւագ վարդապետ, «Գանձասար» աստվածաբանական հանդես, Զ, Եր., 1996, էջ 298-339:

2. «Հարցում վասն մեղաց եւ հանդերձելոց», որտեղ հեղինակը խորհուրդ է տալիս նախ և առաջ աչքի առջև ունենալ սեփական մեղքերը, այլ կերպ ասած՝ տեսնել սեփական աչքի գերանը, ուրիշի աչքի փուշը տեսնելու փոխարեն, և ժամանակ չգտնել բամբասանքով դատելու եղբայրներին (Մի՛ դատիր, որ չդատվես (Մատթ. Է : 1-2)։ Հատկապես հետաքրքիր է մեղքի՝ սարկավագյան աստվածաբանական-փիլիսոփայական ընկալումը՝ «Ոչ առ մահ ամենայն անաւրէնութիւնք մեղք են, եւ են մեղք, որ մահու չափ են»[1]։

3. «Նորին խրատք մանկանց». այստեղ նկատում է, որ ուսման տրված մանուկը չի կարող մի ձեռքով էլ մաճ բռնել, այն է՝ հոգալ ապագայի մասին, այլ ամբողջովին պետք է տրվի ուսմանը, խուլ գտնվի չարախոսության, բամբասանքի, հայհոյության, կատակերգության, քսության հանդեպ։ «Եւ եթէ լսել զայսպիսիսս անարժան եւ վնասակար է, ո՞րչափ եւս առաւել խաւսել»[2]։

4. «Նորին յաղագս որոց կուսութեամբ հաճոյեանան Աստուծոյ»։ Սարկավագն ասում է, թե այս խնդրի մասին թեև պետք չէր գրել, քանզի բազմիցս բնախոս այրերը գրել են կույսերի հրաշափառ առաքինության մասին, սակայն արդար չէ լռելը։ Կուսությունը պետք է կրի նա, ով այն կարող է կրել, քանզի բոլորը չէ, որ կարող են մարտնչել «բնության բոցի» դեմ, շատերն են ասում, սակայն անել չեն կարողանում, կամ իրենց «ճարտար են համարում բժշկության մեջ, սակայն տառապում են ջրգողությամբ», իսկ ով կարողանում է հաղթել ծանրագույն դժոխային պայքարում, որը հեռու չէ արյամբ վկայությունից, նա «առաւել ունի առնուլ յԱստուծոյ զհատուցումն մեծության»[3]։

5. «Հարցումն ընդ սուրբ վարդապետն Սարկաւագ»՝ «Եթէ արժան իցէ թողուլ ի ժամանակի զեղբարս կենակիցս....»[4]։

Տ. քհն. Ուզունյանը Սարկավագի բարոյախրատական երկերի ցանկում ներառել է հետևյալ գործերը՝ «Նորին Յոհաննու խաւսք սակաւաւք», «Նորին առ եղբարս վասն անձին յետ կենաց», «Յոհաննու Սարկաւագ վարդապետի յաղագս քահանայութեան եւ քահանայից եւ գլխոց նոցին», «Բանք խրատու սուրբ վարդապետին Սարկաւագին», «4 հարցմունք, պատասխանիք», «Եւագրէն ի բանից սուրբ վարդապետին, [որ] Սարկաւագ կոչեցեալ»։

---

[1] Յովհաննէս Սարկաւագ. «Հարցում վասն մեղաց եւ հանդերձելոց», «Գանձասար» աստվածաբանական հանդես, Զ, Եր., 1996, էջ 317:

[2] Յովհաննէս Սարկաւագ,Նորին խրատք մանկանց, նույն տեղում, էջ 319:

[3] Յովհաննէս Սարկաւագ, Նորին յաղագս որոց կուսութեամբ հաճոյեանան Աստուծոյ, նույն տեղում, էջ 235:

[4] Հարցումն ընդ սուրբ վարդապետն Սարկաւագ, նույն տեղում, էջ 327-335:

Առավել հանգամանորեն անդրադառնանք բարոյախրատական հարցերին նվիրված միայն մեկ երկի։

Հովհաննես Սարկավագի անվամբ մեզ հասած «Հարցումն ընդ սուրբ վարդապետն Սարկաւագ» կամ «Հարցումն սուրբ վարդապետին մականուն Սարկաւագ»[1] վերնագրված հարց ու պատասխաններն այն գործերից է, որ մնացել է միջնադարյան հայ մատենագրության կարկառուն ներկայացուցչի՝ աստվածաբանական ու բարոյախրատական հարուստ ժառանգությունից, այն սակավաթիվ գրվածքներից, որը հնարավորինս լույս է սփռում Հովհաննես Սարկավագ Իմաստասերի ստեղծագործական ակունքների ու առնչակցությունների և մեզ հասած աղոտ ու սակավաթիվ կենսագրական տեղեկությունների վրա։

Երկի բուն նպատակը հարցնողին խրատելն է՝ ըստ ավանդության և նախօրինակների։ Հովհաննես Սարկավագի այս երկը բնույթով խրատական է, ինչպես ինքն է վկայում, գրել է այն «վասն խրատու»։

Հարց ու պատասխաններում, ինչպես նշում է Հովհաննես Սարկավագը, ինքը թույլ է տվել ասելու առավելապես այն, ինչ գրել են բոլոր «գիտեցողներն» ու «իմաստունները»։ Թեև անուններ չի թվարկում հեղինակը, սակայն սա հաստատում է, որ Հովհաննես Սարկավագի ձեռքի տակ են եղել նախորդ շրջանից հայտնի հեղինակների՝ անապատականության մասին գրվածքները։

Ոչ միայն նրա վարքից, այլև «Բան իմաստութեան....» բանաստեղծության մեջ արված ակնարկից՝ «Յանապատի աստ գամ նըստիմ զի օգտեցայց հանդարտութեամբ....»[2], դեռևս վաղ հասակից այր-գրադարանում օրերով մեկուսանալու, աշակերտներին անապատում դասավանդելու մասին պահպանված ավանդազրույցներից կարելի է եզրակացնել, որ Սարկավագի համար անապատականությունը հարազատ երևույթ է։

«Հարցումն ընդ սուրբ վարդապետն Սարկաւագ» երկում առավել ամբողջական տեսք են ստացել անապատականության մասին սարկավագյան ընկալումները՝ խարսխված Եկեղեցու հայրերի գաղափարների վրա։

Երկն սկսում է հարցով՝ «արժի՞ ինչ-որ ժամանակով թողնենք մեր կենակից եղբայրներին և գնանք անապատ, թե՞ (մնանք) նրանց հետ, որ իրենց անձերում ունենալով կյանքի առաքինության նույն բաղձանքը, չարչարանքով ճգ-

---

[1] Յովհաննէս Սարկաւագ, Եթէ արժան իցէ թողուլ զեղբայրս....., «Գանձասար», հ Զ, Եր., 1996:

[2] Տե՛ս «Բան իմաստութեան....», **Ա. Աբրահամյան**, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Եր., 1956, էջ 321:

նում են Աստծու փառքի համար, քանի որ ցանկալի չհամարեցինք առանձին և մենակ նստել»[1]:

Հովհաննես Սարկավագի հարց ու պատասխանները հիմնավոր պատկերացում են տալիս իր ժամանակի (11-12-րդ դարեր) անապատականության, թե՛ վանականության, թե՛ մենակեցության և՛ դրական, և՛ բացասական կողմերի մասին: Այն հիշեցնում է պատմական ակնարկ անապատականության վերաբերյալ, ուր առանձին օրինակներով ներկայացվում են հասարակությունից մեկուսանալու («անապատում փոքրիկ օթևան» գտնելու) և՛ պատճառները, և՛ նպատակները («աղավնու թևեր առնել») և՛ այդ նպատակներին հասնելու միջոցները՝ ժուժկալություն (հոգևոր ու ֆիզիկական) և աղոթք:

Ինչպես պարզ է դառնում երկից, վանականությունը հեցած է առաջին հայրերի առաքինի սովորության վրա: Այն ձևավորվում է սրտակից միաբանությամբ նորընծա հավատացյալ եղբայրների, որոնց սիրտն ու անձը մեկ է, ովքեր օժտված են հոգևոր շնորհներով, ապրում են խաղաղության մեջ՝ առաքյալների խոսքի համաձայն, ում ունեցվածքը հանրային է: Եթե այդպես են ապրում, ապա մեկուսանալու ոչ մի առիթ լինել չի կարող: Սարկավագը նշում է, որ բազում պատճառներ կան, որոնց հետևանքով կարող է նախընտրվել անապատականությունը, միայն թե տեղի համաբնակությունից ինչ-որ ժամանակով խաղաղության տրվելու՝ մտքի առանձնության և ոչ թե վայրի միայնության համար՝ այն համարելով նախնական քրիստոնեական ապրելակերպ՝ գովելով մենակեցությունը՝ վերադարձի պարտավորությամբ:

Բացահայտվում է, որ Հովհաննես Սարկավագն առավել կարևորում է մտքի առանձնությունը, հավանություն չի տալիս վայրի մենակեցությանը՝ իբրև նախնական քրիստոնեական ապրելակերպ, չի ընդունում մենակեցությունը՝ առանց վերադարձի պարտավորության, որը հետագա շարադրանքում փորձում է պատճառաբանել՝ տարբեր օրինակներով:

Մենակեցությունը պետք է լինի ժամանակավոր, որի նպատակը մարդկային խառնակությունների պատճառով խռովված հոգին խաղաղեցնելը, անժուժկալ ապրելու պատճառով գրգռված զգայարանները սանձելը, հոգուն հանգիստ և տկարացած մտքին, որ պարտվել է զգայարաններից, ուժ տալն է:

Մեկուսանալը կամ մենակեցության տրվելը պետք է դառնա ինքնադաստիարակության և ինքնակրթության միջոց: Անապատում պետք է «վայր մի

[1] Թարգմանությունը մերն է:

հագուցանել[1] զխռովեալ վասն յամբոխական վրդովմանց հոգին եւ զգայութիւնսն ի հարկավորապէս անարգելութենէ արգելուլ եւ հանգուցանել, ոյժ տալ մտացն ի տկարութենէ, յոր անկան՝ յաղթահարեալ ի զգայարանացն։ Եւ անդ, որպէս ի դպրոցի, ժամանակ մի կրթել զանձն եւ իմաստնանալ, որպէս զի մի՛ դիւրաւ միւսանգամ հաւանեսցի կրել յընդունումն ի վերայ անդ անկելոցն պատահմանց ակամայից»[2]։

Իր պատասխաններն առավել համոզիչ դարձնելու նպատակով Հովհաննես Սարկավագը հիշում է անապատականության նախօրինակներին՝ Եղիային (Հեղիաս), ով մեկուսանում էր Կարմեղ լեռան գագաթին, Քոռաթի հեղեղատում, ինչպես և Մեծն Մովսեսին՝ Քորեբ անապատում, Դավթին, Երեմիային, Հովհաննես Մկրտչին, ինչպես նաև բազում աստվածընտրյալ վարդապետների (ոչ հանվանե), ովքեր չտրվեցին վայրի մենակեցության։

Անապատականությունը նախընտրելու պատճառները կարող են լինել տարբեր ու բազմաբնույթ՝ քաղաքային կյանքի խռովություններ, զայրույթի ու կարճամտության մրրիկներ, որոնք պղտորում են հոգու աչքերի մաքրության հստակությունը, դրսից անձերն ու հոգին ներթափանցած զանազան աղմկաստեղծ իրեր, բազմաթիվ անհավատարիմ և խռովարար ժողովների[3] խոսքեր, անժուժկալության հետևանքով սրված զգացություններ և բազում ու բազմատեսակ հոգևոր արատներ՝ սպանիչ նախանձը և մերձավորին նախանձողներին։ Նաև լռում այլ բաների մասին, ապա հիշում ոչ բարիներին և նրանց, ովքեր մշտապես ապրում են՝ ըստ միայն մշտապես լսած ու իմացած ճոխության, ինչն «անհամապատասխանություն»՝ տարաձայնություններ է առաջացնում անապատականների միջև։

Սարկավագը կարևորում է օգտակարության հանգամանքը՝ կա՛մ լինել օգտակար, կա՛մ օգտվել մեկից՝ խոսքով և գործով, սակայն հանդիպում են բոլորովին հակառակ բաները՝ «Բամբասեմք եւ բամբասիմք, ճառք աղճատանաց եւ շատախաւսութեան ի բերանս ամենեցուն մեր, դատիմք զմիմեանս եւ դատապարտեալ լինիմք…. : Քսութեան եւ շոգմոգութեան աւրինակ միմեանց լինիմք. կատակաբա-

---

[1] Բառը պիտք է լինի **հանգուցանե**լ, քանի որ տեքստից բխում է, որ խոսքը ոչ թե հագցնելու, այլ հանգիստ տալու, հանգստացնելու մասին է։

[2] Եթէ արժան իցէ թողուլ զեղբայրս….., Յովհաննէս Սարկաւագ, Գանձասար, հ Ջ, Երևան, 1996, էջ 328։

[3] Հավանաբար, նկատի են առնված Քաղկեդոնի (451 թ.), որը պատճառ դարձավ քրիստոնեական ընդհանրական եկեղեցու տրոհմանը, Կոստանդնուպոլսի (553 թ.), Կ. Պոլսի 2-րդ (680/81 թթ.), Նիկիայի 2-րդ՝ (787 թ.) տիեզերաժողովները, որոնք մերժում է Հայ Առաքելական Եկեղեցին՝ ընդունելով միայն առաջին երեք տիեզերաժողովները՝ Նիկիայի (325 թ.), Կոնստանդնուպոլսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.)։

նութեան եւ ծաղու անխտրութիւն է ի մեզ, որպէս ի հացկատակաեսս եւ ի սիրող նոցունց, սիրոյ եւ ողորմութեան պակասութիւնն եւ յաճախութիւնն ատելութեան եւ անգթութեան, բարեկամութեան ստեղծական եւ անհավատարիմ»[1]:

Մարդկային և եղբայրական հարաբերությունների խզման պատճառ կարող է դառնալ երեսպաշտությունը՝ «Գովեստ բերանոյ յանդիման երեսաց քարոզական եւ պարարտ եւ առաջի այլոց լի պարսաւանաւք եւ հայհոյութեամբ։ Սիրտք մեր հանճարեղք եւ խորինք առ նենգաւորութիւն միմեանց, իսկ առ իրս եղբայրութեան՝ վայելչականս եւ գովելիս, ի ճշմարիտ կամաց յիմարութեամբ եւ ապուշ, անզգամութեամբ խաւարեալք»։

Հակառակասիրությունը, սուտը, ոխակալությունն ու նախանձը[2]*, մարդահաճությունն ու որկրամոլությունը, ընչաքաղցությունը*[3]*, վեճն ու կռիվը, չարության աշխարհակալ խավարը, հացկատակների կատակաբանությունն ու ծաղրը, ատելությունը, անգթությունը, սիրո ու ողորմության պակասը, ձևական ու անհավատարիմ բարեկամությունը, երեսպաշտությունը, հակառակասիրությունը, տրտմության հանդեպ անտարբերությունը, սուտն ու կեղծիքը, ոխակալությունն ու նախանձը, որոնց ծնունդն են բոլոր չար բաները, եսամոլությունը՝ սեփական անձինը և ոչ ընկերինը ու Հիսուս Քրիստոսինը փնտրելը, գայթակղիչներին հավասարվելը, անառակներին սիրով հարելը, իսկ օրինավորներից խորշելը, հեռանալն ու նույնիսկ ատելը, մարդահաճությունը, որկրամոլությունը, օտարների և բազում պատճառներով յուրայինների հետ մահկանացու բնությունից բխող վեճ ու կռիվը, լկտիությունն ու չարաբարոյությունը և այլն, և այլն, որոնցից շատերի մասին էլ լռում է, ևս կարող են պատճառ դառնալ եղբայրության խզմանը և մենակեցությունը նախընտրելուն։*

Ահա, այսպես, գրելով մարդկային հասարակությունից, ինչպես և կուսանոց կամ եղբայրանոց կոչված համաբնակությունից հեռանալու տարաբնույթ ու բազմազան երևույթ-պատճառների մասին՝ հնչեցնում է իր հռետորական հարցը և ինքնադատապարտման ու ամոթի մորմոքը, որը նարեկացիական ողբերգության նուրբ արտահայտություններ է ստացել այս երկում. «Ո՞ համարձա-

---

[1] Եթէ արժան իցէ թողուլ զեղբայրս....., Յովհաննէս Սարկաւագ, նույն տեղում, էջ 332: Ցավով պետք է նկատել, որ բնագիրը ներկայացնող հեղինակը՝ Տրդատ քահանա Ուզունյանը, հաճախ կամայականորեն է կետադրում բնագիրը, ինչը կարող է հասնել նույնիսկ անհեթեթության, ինչպես այս նախադասության մեջ նա հացկատակների բառը բաժանել է երկու մասի, հաց-ից հետո դրել վերջակետ, կատականս բառով սկսել նոր նախադասություն, որից ասելիքը խեղաթյուրվում է:

[2] Նույն տեղում, էջ 333:

[3] Եթէ արժան իցէ թողուլ զեղբայրս....., Յովհաննէս Սարկաւագ, էջ 333:

կեսցի ասել յայտնապէս զքանիանութիւն ատելի եւ արտանեն իմացմանց եւ գործոց թերեւս։ Վասն զի չիք խտրութիւն տարաժամ ժամանակաց, պատահմանց եւ խաւսակցութեան համանմանիցն։ Բազում անգամ եւ յարակցութեան եւ յարատ աչաց արձակութեան ամաչեմ ճշմարտապես ընդ բանիցն արկանել ի պարկեշտ լսելիս, բայց զի մի վայրապար եւ անհաստատ մտաց տհաճ, ...»[1]։

Նախապես գեղեցկահարդար և հմտորեն կարգավորված քաղաքները (նկատի ունի նաև եկեղեցին, որի նպատակը աշխարհիկ մարդկանց հոգևոր կարիքները բավարարելն էր) և անապատների բնակիչների՝ վանականության լուսավոր կրոնը բաժանված չէին, գուցեև ունեցել են չնչին զանազանություն՝ «Արդ, յայնմ ժամանակի եւ քաղաքք բարեպաշտիցն ոչ ժամու բաժանեալ ինչ էին յաղագս գեղեցկայարդար եւ քաջաւրէն կարգաւորութեան յանապատի բնակչացն լուսաւոր կրանիցն։ Եւ դուն (ուղղել՝ դյուզն) ուրեք թերեւս ունէին զանազանութիւն առ միմեանս»[2], *որը ինչ-որ երկրորդական կամ օտարացնող երևույթ չէ, քանի որ նախօրինակները, ովքեր առաջին ժամանակների սրբեր էին, Աստծու կամքով ու օրհնությամբ, բնության բազմաթիվ հանգամանքների համաձայն ապրում էին ամուսնական կենցաղավարությամբ և մեղանչում։*

Հեղինակը ցավով է նկատում, որ իր ժամանակներում կուսանոցներում կամ եղբայրանոցներում շատ քչերն են Տիրոջ կամքը փնտրողները և աշխարհայինը չհոգացողները։ Իրենց մեջ առավել շատ են նրանք, ովքեր ընտրել են անապատականությունը հանուն շահի, փափկության, մարմնաբուծության, ինչի համար էլ առավել «պտղակորույսներ են, խոսքը խեղդողներ և փշեր», քան ամուսնությամբ կապվածները՝ «Բայց առ մեզ սակաւք եւ յոյժ նուազունք եւ յանուանեալ կուսաստանս կամ յեղբայրանոցսն գտանին կամացն Տեառն խընդրողք, միայն ճշմարտապէս եւ զաշխարհիս ոչ հոգացողք։ Քանզի առաւել մանաւանդ ի մեզ շահից եւ փափկութեան վասն եւ մարմնաբոյծ լինելոյ գոն փուշք եւ հեղձուցիչ բանին եւ պտղակորոյսք, քան ի կապեալսն ամուսնութեամբ»[3]։

Թեև Հովհաննես Սարկավագը ներկայացնում է հասարակության, հատկապես, վանականության մեջ առկա այն արատները, որոնք կարող են պատճառ դառնալ անապատականության այս տարատեսակը՝ մենակեցությունն ընտրելուն, սակայն աշխարհից, այն է՝ մեղսածին միջավայրից հեռանալը դեռևս չի նշանակում ազատվել այդ ամենից։ Տանջող բեռների ծանրությունից թեթևանալու և աշխարհի ծովում կորստից փրկվելու համար անհրաժեշտ է ոչ միայն

---

[1] Նույն տեղում, էջ 334։

[2] Նույն տեղում, էջ 330։

[3] **Յովհաննէս Սարկաւագ**, Եթէ արժան իցէ թողուլ զեղբայրս....., Գանձասար, հ. Զ, Երևան, 1996, էջ 331։

խաղաղ վայր, այլև մերձավոր ու լավաբարո իմաստուն, գիտուն առաջնորդ և նախապատվություն տալ իմացություններին և գործերին՝ «Արդ, եթէ ոչ զգուշացուք ամենայն սրտիւ եւ զաւրութեամբ գտանել մերձաւորս իմաստունս …. Անհնար է թեթեւանալ ի տանջիչ բեռանցն ծանրութենէ ….»[1]:

Մենակեցությունը նախընտրելու նպատակները պետք է դառնան մտքերը խաղաղեցնելն ու Աստծուն հաղորդակցվելը (Եղիա), առ Աստված հույսի ակնկալություն՝ ցանկանալով աղավնու թևեր առնել (Երեմիա), ժամանակ գտնելը՝ բարձրագույնի մասին մտորելու, միմիայն Աստծու հետ «տեսակցելու» և խոսելու անհրաժեշտությունը (եկեղեցու բազում աստվածընտրյալ եպիսկոպոսներ), տանջող բեռների ծանրությունից թեթևանալն ու աշխարհի ծովում կորստից փրկվելը:

Ինչպես Հիսուս Քրիստոսի համար առանձնանալու և իր նպատակներին հասնելու կարևորագույն միջոցը աղոթքն էր, այդպես էլ նրա հետևորդների՝ առավել ևս անապատականությունն ընտրածների համար առավել փափագելի և քաղցր ոչինչ չկար, քան աղոթքը՝ «….Երթալ առ անապատաւորս եւ յանապատս, որպէս զի յամփոփման զգայութեանցն առնել պարապումն եւ ժամանակ մտացն ի բարձագոյնսն եւ յառաւել տեսութիւն, ընդ Աստուծոյ միայն լինել եւ խաւսել ընդ Նմա աղաւթիցն յարաձգութեամբ, քան զոր ոչինչ փափաքելի եւ քաղցր համարէին»[2]:

Հովհաննես Սարկավագը, մանրամասն խոսելով այս ամենի մասին, իբրև վարդապետ և ուսուցիչ գալիս է ամենակարևոր եզրահանգման, այն է՝ անապատական առանձնացման ժամանակ Սուրբ Հոգու ճառագայթների ծագումից շահած հոգնապատիկ պտուղները, ըստ Աւետարանի՝ մատուցել իրենց որդիներին, ինչպես անում էին եկեղեցու բազում վարդապետները՝ «Այլ և ի պտղոյ անտի շահիցն յոքնապատկացն (ողղել՝ յոգնապատկացն), զոր ի հանդարտութենէն շահեալ ստացան, ի ծագմանէ Հոգւոյն Սրբոյ ճառագայթից բերեալ՝ մատուցանէին որդւոյ իւրեանց, ըստ Աւետարանին ի Քրիստոս Յիսուս»[3]:

Այսպիսով, թեև Հովհաննես Սարկավագն ուղղակիորեն չի պատասխանում հարցին, թե արժի՞ ինչ-որ ժամանակով թողնել իրենց կենակից եղբայրներին և գնալ անապատ, թե՞ (մնալ) նրանց հետ, ովքեր, իրենց անձերում ունենալով կյանքի առաքինության նույն բաղձանքը, չարչարանքով ճգնում են Աստծու փառքի համար, ակնարկում՝ «ցանկալի չհամարեցինք առանձին և մենակ նրս-

---

[1] Նույն տեղում, էջ 335:

[2] Նույն տեղում, էջ 330:

[3] Նույն տեղում:

տել», բայց ժամանակ առ ժամանակ հոգևոր խաղաղություն ձեռք բերելու համար պետք է մեկուսանալ, ապա վերադառնալ իրենց կենակից եղբայրների մոտ և օգնել նույնիսկ անօրեններին բարեպաշտության գործում, իսկ ամենակարևորը՝ այնտեղի ձեռք բերածը մատուցել իրենց սաներին կամ հետևորդներին։

Իսկ իր պատասխանների բուն նպատակը հարցնողին խրատելն է՝ ըստ ավանդության և նախօրինակների։

Հարց ու պատասխաններում, ինչպես նշում է Հովհաննես Սարկավագը, ինքը թույլ է տվել ասելու առավելապես այն, ինչ գրել են բոլոր «գիտեցողներն» ու «իմաստունները»։ Թեև անուններ չի թվարկում հեղինակը, սակայն սա հաստատում է, որ Հովհաննես Սարկավագի ձեռքի տակ են եղել անապատականության մասին նախորդ շրջանից հայտնի «գիտեցողների» և «իմաստունների» երկերը։ Իսկ թե ում գրվածքները կարող էին կանոնակարգել անապատականությանը վերաբերող խնդիրները, եթե ոչ առաջին հերթին անապատականության ակունքներում կանգնած հայրերի, ինչպես նաև հայ մատենագիրների, որոնք տարբեր առիթներով անդրադարձել են անապատականությանը։

Աներկբայորեն, Հովհաննես Սարկավագի հիշատակած գիտեցողներից և իմաստուններից մեկը Անտոն Անապատականն է։ Ինչպես որ Աթանաս Մեծն է արտահայտվել նրա մասին, թե «նա իմաստուն մեղվի նման ամեն տեղից իր համար հոգևոր մեղր էր հավաքում և ամբարում իր սրտի մեջ, ինչպես մեղուն փեթակի մեջ»։ Համարյա թե նույն բառերով Հովհաննես Սարկավագին է բնութագրում է Կիրակոս Գանձակեցին «Որ իբրեւ զիմաստուն մեղու՝ բարձեալ յանդամս մտաց զծաղիկս յերանգոց գունոց և հոտոց և համոց բերէր ի քաղաք իւր …»[1]։

Անտոն Մեծը (Անապատական) գրում է. «Աղոթեցե՛ք, թող Աստված շնորհ տա ձեզ ամեն ինչ հստակ տեսնելու և ըմբռնելու, որպեսզի ճշտորեն կարողանաք տարբերել՝ ինչն է լավը և ինչը՝ վատը։

Վանքերում ապրող վանականներից և կուսակրոններից շատերը չեն հասնում այդ չափին, ….., որ կատարելության գագաթնակետն է։ Պետք է հեռու մնալ ըստ իրենց ցանկության ապրող մարդկանցից և նրանց աշխարհային խոսակցություններից (լռել կարողանալը դառնում է վանականի և կուսակրոնի կենսակերպի կարևոր պայմաններից մեկը, որը բնորոշ է եղել նաև Հովհաննես Սարկավագի վարդապետանոցին),[2] որոնք մարում են հոգու կրակը՝ «Մի՛

---

[1] Պատմութիւն հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, էջ 104-105, 84։

[2] Տե՛ս **Սամուէլի քահանայի Անեցւոյ,** Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոյ մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, Վաղարշապատ, ս. Էջմիածին, 1893, էջ 128)։

հանգցրեք Հոգին, մի՛ արհամարհեք մարգարեությունները» (Թեսաղ. 5, 19-20): Իմացե՛ք, որ Հոգին ոչ մի բանից այնպես չի հանգում, որքան ունայն խոսակցությունից»[1]:

Հովհաննես Սարկավագը բերում է այն նույն նախօրինակներին (Եղիա, Երեմիա, Դավիթ, Հովսեփ, Հովհաննես Մկրտիչ, Հիսուս Նազովրեցի) և Աստվածաշնչային այն մեջբերումները (Ղուկ. Դ-2, Մատթ. ԺԷ, Գ Թագ. ԺԸ-42, նույն գրքում՝ ԺԷ- 3-5, ԺԹ 9-18 և բազմաթիվ այլ համարներ), որոնք գործածում է Անտոն Մեծը:

Հովհաննես Սարկավագ	*Անտոն Անապատական*
1. «Եւ ունի զիշխանութիւնս եւ զպետութիւնս եւ զաշխարհակալ խաւարն զչարութեանն այսս, որ ի ներքոյ երկնից, մարզիչս ....»[2]:	*1. «Եվ նրանց դեմ է մեր պատերազմը, ինչպես ասաց սուրբ առաքյալը. «Մեր պատերազմը մարմնի և արյան հետ չէ, այլ իշխանությունների հետ և պետությունների հետ, և այս խավար աշխարհի տիրակալների հետ և երկնքի տակ եղող չար ոգիների» (Եփես. 6. 12)»[3]:*
2. «.... Խնդամք եւ տրտմիմք, բարկանամք եւ մեղանչիմք եւ արեգական մտանելն ոչ լուծանէ զբարկութիւն մեր (Եփես. Դ-26)»:	*2. և «...: Հատկապես ջանա կատարել առաքելական պատգամը. «Արեգակը ձեր բարկության վրա թող մայր չմտնի» (Եփես., 4, 26) և մտածիր, որ սա ասված է ընդհանրապես յուրաքանչյուր պատգամի մասին, որպեսզի արեգակը մայր չմտնի ոչ միայն մեր բարկության, այլ նաև մյուս մեղքերի վրա»[4]:*

Մինչև ճշմարիտ աստվածաճանաչողություն շատ երկարատև ու երկար ճանապարհ է, որովհետև նույնիսկ Անտոնն իրեն այդ հարցում տեղադրում է հոգևոր մանկության հասակում: Այդ նույն երկար ճանապարհի մասին են վկայում և՛ Եղիա մարգարեին ուղղված աստվածային պատգամը՝ գնալ Քոռաթի

---

1 **Սուրբ Անտոն Մեծ,** Հոգևոր խրատներ, «Քրիստոսով ապրելու խրատները, քաղված նրա կյանքի՝ սուրբ Աթանասի գրառած պատմությունից, որ բովանդակում է 20 ուղերձ և 20 պատգամ», Ս. Էջմիածին, 2007, էջ 68:

2 Եթէ արժան իցէ թողուլ զեղբայրս....., Յովհաննէս Սարկաւագ, Գանձասար, հ. Ջ, էջ 334:

3 **Սուրբ Անտոն Մեծ,** նշվ. աշխ., էջ 27:

4 **Նույն տեղում,** էջ 104:

հեղեղատ (Գ Թագ. 17 : 3), և՛ Դավիթը՝ «Մեկն ինձ աղավնու թևեր տար, որ թռչելով բարձրանայի (Գիրք Սաղմ. Դաւթի. 54 : 7)»[1]:

Հովհաննես Սարկավագը, կարելի է ասել, որ ներկայացնում է աստվածաբանական այն նույն խնդիրներն ու հարցերը՝ վանքերում ապրող վանականների ու կույսերի[2], մերժելի և դրական երևույթների[3], Աստծու կամքը փնտրելու և այլն, որոնց շուրջ խոսում է նաև Անտոն Անապատականը:

Աներկբայելի են նաև Հովհաննես Սարկավագի ստեղծագործության և Մակար Մեծի խրատների առնչակցությունները: Վեջինս՝ Անտոն Անապատականի ժամանակակիցն ու նրա բազմաբովանդակ խրատների անմիջական ունկնդիրն էր: Այդ իսկ պատճառով պատահական չէ, որ խոր ընդհանրություններ ենք գտնում նրանց խրատներում, և դրանք իրենց հետքն են թողել նաև մեր փիլիսոփա աստվածաբանի մտածողության և երկերի վրա: Այսպես, եթե Մակար Մեծը հանգամանորեն ներկայացնում է անկյալի խավար վիճակը, չար իշխանին՝ խավարի թագավորությունը և նրա ազդեցությունը մարդու վրա՝ «20. Չար իշխանը՝ խավարի թագավորությունը, սկզբնապես գերելով մարդուն, այնպես պաշարեց ու պարուրեց հոգին խավարի իշխանությամբ, ինչպես զգեստավորում են մարդուն, որպեսզի դարձնեն նրան թագավոր, տան նրան ամենայն արքայական հանդերձանք, որպեսզի ոտքից գլուխ կրի ամենայն թագավորականը: Այդպես չարի իշխանը մեղքով պարուրեց հոգին, նրա ողջ բնությունը և ամբողջովին պղծեց, ողջը գերեվարեց և տարավ իր թագավորություն, նրա մեջ իր իշխանությունից ազատ ոչ մի անդամ չթողեց՝ ո՛չ խորհուրդները, ո՛չ միտքը, ո՛չ մարմինը, այլ պատեց այն խավարի պատմուճանով»[4], ապա Հովհաննես Սարկավագը նույնն է ներկայացնում շատ լակոնիկ ոճով՝ «Եւ ունի զիշխանութիւնս եւ զպետութիւնս և զաշխարհակալ խաւարն, զչարութեան այսս, որ ի ներքոյ երկնից, մարզիչս ի նոյն և գրգռիչս»:

Գրիգոր Նյուսացին Եփրեմ Ասորու Ամիդից Եդեսիա տեղափոխվելու պատճառների մասին գրելիս ասում է. «Նրան այնտեղ ձգում էր այնտեղի սրբությանը ծնրադրելու ցանկությունը, իսկ ամենից առաջ՝ ցանկությունը գտնելու մի գիտուն այրի, ումից նա կարող էր ստանալ կամ ում կարող էր հաղորդել իմացության պտուղը»[5]: Իսկ Հովհաննես Սարկավագը գրում է. «Արդ, եթէ ոչ զգուշասցուք ամենայն սրտիվ եւ զաւրութեամբ գտանել մերձաւորս իմաստունս եւ

---

1 **Սուրբ Անտոն Մեծ,** Նշվ. աշխ., էջ 75:

2 **Նույն տեղում**, էջ 67:

3 **Նույն տեղում**, էջ 103:

4 **Սուրբ Մակար Մեծ**, Հոգևոր խրատներ, ս. Էջմիածին, 2007, էջ 19:

5 **Սուրբ Եփրեմ Ասորի**, Հոգևոր խրատներ, ս. Էջմիածին, 2007, էջ 20:

լաւաբարոյս եւ տեղի անքոյթ եւ ապահովս ի խռովութեանց ալեաց վնասակարաց հոգւոց ըստ գրեցելոցդ, անհնար է թեթևանալ ի տանջից բեռացդ ծանրութենէ կամ ապրել ի ծովու աշխարհիս կորստենէ։ Ոչ եթէ զի ոչ իցէ կամողութիւնն ի մէջ այնպիսեացն առաքինանալ եւ հաճոյ լինել Տեառն՝ ասեմ զայս»[1] *կամ, թեև հակառակն է հանդիպում, «Բայց, արդ, հակառակն ամենայնիւ եւ յամենայն իրս հանդիպի՝ ոչ ի բանս եւ ոչ ի գործս շահեցուցանել զոք եւ կամ շահել յումեքէ գոյ կարողութիւն»*[2]*, բայց խոսքով և գործով անհրաժեշտ է գիտուններից ստանալ կամ նրանց հաղորդել իմացության պտուղը։*

Հովհաննես Սարկավագի ստեղծագործությունների վրա առկա է նաև հունական անտիկ փիլիսոփայության ազդեցությունը։ Պատահական չէ, որ նրան անվանել են սոփեստոս, ոչ միայն նկատի ունենալով նրա փիլիսոփա լինելը, այլև հենց սոփեստական դպրոցից[3] *կրած ազդեցությունը, ինչը հաստատվում է նաև այս երկի գրական մեթոդի՝ հարց ու պատասխանների ընտրությամբ։*

Իբրև փիլիսոփա-աստվածաբան արծարծում է նաև գեղագիտական և բարոյագիտական խնդիրներ, որոնք, մասնավորաբար, վերաբերում են գեղեցիկին և օգտակարին՝ շահեկանին, բարու և ոչ բարու (չարի) խնդիրներին։

Գեղեցիկը արտաքին տեսքը չէ, այլ ներքին գեղեցկությունը, որով երևում է մարդու նմանությունը արարչի հետ, գեղեցիկը այն գործն է, որ հիշում է Աստված. Նա չի մոռանում նաև անգործներին՝ «Արտաքուստ երեւիմք գեղեցիկ, այլ ոչ ի ներքոյ. այնպիսի ինչ, յորում մանավանդ երեւի գեղեցկութեան իսկ նմանութիւն՝ այնմ, որ ստեղծ զմեզ եւ առնու ի մտիս զգործս մեր եւ զանգործսն տեսանէ հաւասարապէս»[4]*։*

«Շահելն» ու «շահեցուցանելը» կամ օգտակարությունը Հովհաննես Սարկավագի համար բարոյագիտական խնդիր է և ոչ նյութական։ Մարդը թեև հնարավորություն ունի խոսքով և գործով օգուտ տալ ինչ-որ մեկին կամ օգտվել, սակայն բոլորովին հակառակ բաներն է անում։ Նա գրում է. «Բայց, արդ, հակառակն ամենայնիւ եւ յամենայն իրս հանդիպի՝ ոչ ի բանս եւ ոչ ի գործս շահեցուցանել զոք եւ կամ շահել յումեքէ գոյ կարողութիւն»[5]*։*

---

[1] **Յովհաննէս Սարկաւագ**, Եթէ արժան իցէ թողուլ զեղբայրս....., Գանձասար, հ. Զ, էջ 333:

[2] Նույն տեղում, էջ 332:

[3] **Սոփեստոս-(** հունարեն sophistes- վարպետ, գեղանկարիչ) բառից – այսպես էին կոչում հին հունական փիլիսոփաներին, որոնք հանդես էին գալիս իբրև իմաստության և գեղախոսության ուսուցիչներ՝ մ. թ. ա. 5-րդ դարում: Սոփեստները գերազանցապես հետաքրքրված են **մարդով, նրա մտածողությամբ, բանականությամբ, բարոյականությամբ, հասարակական և անձնական վարքագծով**:

[4] Եթե արժան իցէ...**Յովհաննէս Սարկաւագ**, Գանձասար, հ. Զ, էջ 333:

[5] Նույն տեղում, էջ 332:

Այստեղ նա, ասես, իր գեղագիտական հայացքները քաղել է Սոկրատից, ով ասում էր, թե այն, ինչ օգտակար է, նաև գեղեցիկ է։

Այլ ստեղծագործություններում, ինչպես նկատել է Վ. Հովսեփյանը, Սարկավագի համար «իսկական գեղեցկությունը մարմնավորված է բնության մեջ... Ամենից անկեղծ և այդ պատճառով ամենից գեղեցիկ ձայնը, խոսքը, պատկերը բնության նմանությամբ ստեղծվածներն են։ Սա է Իմաստասերի գլխավոր գեղագիտական դրույթը»[1]*։*

Այս երկը համեմատելով առաջին հայրերի՝ Աթանաս Մեծի, Անտոն Անապատականի, Մակար Մեծի, Եփրեմ Ասորու, Գրիգոր Նյուսացու խրատների հետ՝ կարելի է եզրահանգել, որ Հովհաննես Սարկավագի խրատական այս գործը, դասախոսության համառոտագրություն է, որտեղ ներկայացված են անապատականությանը վերաբերող միայն կարևոր դրույթները, որոնք այնուհետև կլրացվեն բանավոր զրույցի ժամանակ։ Դա ենթադրվում է նաև խոսքը կառուցելու ընույթից և ոճից։ Հաճախ հեղինակը միտքն ասես թողնում է առկախ, երբ կարելի էր առավել մանրամասնել և պարզաբանել, ինչպես այդ անում են առաջին հայրերն իրենց խրատներում, նա հաջորդիվ շատ արագ անցում է կատարում այլ հարցերի՝ միայն ներկայացնելով առանցքայինը, նույնիսկ չհիշատակելով անուններ, թեև իրեն թույլ է տալիս ասելու առավելապես այն, ինչ գրել են բոլոր «գիտեցողներն» ու «իմաստունները»։

Երկն անուղղակիորեն հաստատում է, որ նա վարել է նաև անապատական կյանք, բայց ոչ վայրի մենակեցական, ու փաստում, որ եղել է կուսակրոն քահանա։

Իր աստվածաբանական երկերով Սարկավագը ներկայացնում է Հայ Առաքելական Եկեղեցու դավանաբանությունն ու հավատարմությունը քրիստոնեության առաջին հայրերի ու առաջին երեք տիեզերաժողովների սկզբունքներին։

Հովհաննես Սարկավագի աստվածաբանական ու բարոյա-խրատական երկերը մեծապես նպաստել են Հայ Առաքելական Եկեղեցու կատարած պատմական կարևորագույն դերակատարությանը, այն է՝ Եկեղեցու ընդերքում սերած մշակույթի, գիտության ծառայեցումը հայի տարանջատված բեկորների ներքին միավորմանը ոչ միայն իր շուրջ, այլև հայրենի հողի վրա, ազգային ինքնության պահպանմանը, համաշխարհային նմանատիպ գործընթացներում իր առանձնահատկությունների ու յուրօրինակության արտացոլմանը։

---

[1] **Հովսեփյան Վ. Ա.,** Գեղագիտական ուսմունքի պատմություն, Եր., 1979, էջ 184-186։ Կարծում ենք, որ հեղինակը ծանոթ չի եղել վերոբերյալ քննվող երկին, այլապես կանդրառնար նաև «օգտակարն իբրև գեղեցիկ» դրույթին։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՈՒ ԲԱՐՈՅԱԽՐԱՏԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ

Գայանե Սիմոնյան

Բանալի բառեր՝ *տեսական աստվածաբանություն, աղանդներ, Ս. Երրորդություն, նախօրինակ, բարոյագիտական խնդիրներ, գեղեցիկը, օգտակարը, առնչություններ:*

Սարկավագը գրել է, կատարելապես մեկնելով, վերլուծելով վարդապետությունը, մարգարեություններն ու առաքելական թղթերը, վերականգնել է ժամանակի ընթացքում աղճատված բնագրերը, որոնցից շատերը մեզ չեն հասել կամ դեռևս բացահայտված չեն:

Աստվածաբանական երկերում առանձնահատուկ ուշադրություն է դարձրել Ս. Երրորդության, Հիսուսի բնության (աստվածային ու մարդկային) և այլ հիմնախնդիրներին, որոնք պատճառ հանդիսացան ոչ միայն քրիստոնեական ընդհանրական եկեղեցու պառակտմանը, այլև բազմապիսի աղանդների՝ սաբելականություն, արիոսականություն, նեստորականություն ևն, ձևավորմանը: Քննադատելով այս վաղ քրիստոնեական աղանդները՝ Սարկավագը պաշտպանում և ամրակայում է Հայ Առաքելական Եկեղեցու վարդապետությունն ու դավանանքը:

Անապատականության մասին իր «Հարցումն ընդ սուրբ վարդապետն Սարկաւագ» («Եթէ արժան իցէ թողուլ ի ժամանակի զեղբարս կենակիցս....») բարոյախրատական երկը, գրված հարց ու պատասխանի ձևով, առնչություններ ունի Անտոն Մեծի, Աթանաս Մեծի, Եփրեմ Ասորու և Եկեղեցու այլ հայրերի երկերի հետ:

БОГОСЛОВСКИЕ И НРАВСТВЕННО-ДИДАКТИЧЕСКИЕ СОЧИНЕНИЯ ОВАННЕСА ДЬЯКОНА

Гаяне Симонян

Ключевые слова: *теоретическая теология, секта, С. Троица, прототипы, этические вопросы, красивое, полезное, соотнашение.*

Ованес Саркаваг (Джон Дикон) отлично проанализировал учение, пророчество и апостольские письма, восстанавил в течение долгого времени искаженные рукописи, многие из которих до нас не дошли или пака не выявлены.

В богословских трудах он уделял особое внимание проблем Святой Троицы, природы Иисуса Христа (божественной и человеческой), которые вызвали раскол не только христианской церкви в целом, но стали причинами происхождения многих ересов (савелианство, ариосианство, несторианство и т.д.). Критикуя все эти ранехристянские ереси он твердо фиксировал учение Армянской Апостольской Церкви.

Произведение Саркавага «Стоит ли какое то время оставить наших консорт братьев (вопрос и ответы) морально-дидактического содержания.

Это произведение о пустыннечестве имеет соотнашение с трудами Антона Великого, Афанасия Великого, Ефрема Сирина, и других отцов церкви.

THEOLOGICAL AND MORAL-DIDACTIC WRITINGS OF JOHN THE DEACON

Gayane Simonyan

Keywords: *theoretical theology, sect, St. Trinity, prototypes, ethical issues, beautiful, useful, connection.*

John the Deacon (Hovhannes Sarkavag) perfectly analyzed and interpreted Christian teaching, the prophetic and apostolic books; he restored many originals, which were contaminated during the centuries or did not reached us, or are not revealed yet.

In his theological writings John the Deacon paid a special attention to an important christological questions (concerning Holy Trinity, two natures of Jesus Christ), which caused not only the split of ecumenical Church, but also became a reason for appearence of many heresies (Sabellianism, Arianism and Nestorianism); meantime he firmly fixed the Faith of Armenian Apostolic Church.

His writing dedicated to the monasticism “Question to st. vardapet Sarkavag” («Is it wise to leave temporarily concort brothers....”) written in the form of questions and answers, bears the common ideas with the works of Anthony the Great, Athanasius, Ephrem the Syrian and other church fathers.